Արձանագրություն N 2-4

**ՀՀՔԿ-ԲՄԽԾՁԲ-26/2 ծածկագրով «Երևանի Վահագն Դավթյանի անվան հ. 37 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման խորհրդատվական ծառայության ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան

18.06.2026թ.
ժամը 12:00

Մասնակցում էին՝

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Զոհրաբյան |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ա. Քոչարյան |
| | Հ. Գինովյան |
| | Տ. Կոմիտասյան |
| Հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ | Ն. Հարությունյան |
| Բացակայում էր հանձնաժողովի անդամ՝ | Ս. Նունյան |

## 1. Մասնակցի հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու մասին

---

(Ա. Զոհրաբյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի մասնակցի՝ «ԼՈՒՔ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին 16.06.2026թ. ծանուցվել է վերջինիս՝ առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի պահանջների համաձայն՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչն էլ սահմանված ժամկետում արվել է նրա կողմից:

Ընդունվել է որոշում՝ կողմ –4, դեմ – 0:

## 2. Գնման ընթացակարգի ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների մասին

---

(Ա. Զոհրաբյան)

2.1 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 7-րդ ենթակետը, գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ «ԼՈՒՔ» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է հետևյալ կերպ.

| Հ/հ | Ընտրված մասնակից | Տեխնիկական առաջադրանք (ՏԱ) | Գնային առաջարկ (ԳԱ) | Մասնակցի հայտի ընդհանուր գնահատականը |
|---|---|---|---|---|
| 1 | «ԼՈՒՔ» ՍՊԸ | 52.5 | 30 | 82.5 |

2.2 Հիմք ընդունելով Կարգի 40-րդ կետի 7-րդ ենթակետը գնահատող հանձնաժողովը որոշեց ընտրված մասնակից ճանաչել «ԼՈՒՔ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ –4, դեմ – 0:

### 3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

---

(Ա. Ձոհրաբյան)

3.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2.2 կետով ընդունված որոշումը, ինչպես նաև Օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝ գնահատող հանձնաժողովը որոշեց պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «ԼՈՒՔ» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ –4, դեմ – 0:

### 4. Գնման ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը և վայրը հաստատելու մասին

---

(Ա. Ձոհրաբյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագիր կնքելու օրը (կամ չկնքվելու հանգամանքը հայտնի դառնալու օրը) ՀՀ քաղաքաշինության կոմիտեում, ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, IV հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ –4, դեմ – 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ---------------------------------------- Ա. Ձոհրաբյան

Անդամներ՝

---------------------------------------- Ա. Քոչարյան

---------------------------------------- Հ. Գինովյան

---------------------------------------- Տ. Կոմիտասյան

Արձանագրությունը կազմեց հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ ---------------------------------------- Ն. Հարությունյան